**Հավելված 2**

**2025 թ. հունվարի 23-ին**

**կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ԱՌՀԳ10 պայմանագրի**

## Դրամաշնորհային հաշվետվություն N 1

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | **«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»** |
| **Դրամաշնորհի N** | **«ԱՍՀՆ-ԴՄ-ԵԽՑԾ-25/7-1»**<br>**Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ** |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | **«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն** |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | 01 հունվար, 2025թ.- 31 դեկտեմբեր, 2025թ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 03 հունվար, 2025թ. - 31 մարտ, 2025թ. |
| **Ներկայացման օր** | 10.04.2025թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Ռոզա Բարսեղյան, սոցիալական աշխատող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը իրականացնում է ծրագիր, որի շրջանակում Գեղարքունիքի մարզի՝ ԿԴԻՀ մինչև 18 տարեկան 130 երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական, կրթական, խորհրդատվական, վերականգնողական ծառայություններ:

Ծրագիրը միտված է խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և/ կամ նրանց սոցիալական մեկուսացումը՝ խթանելով ԿԴԻՀ երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, նպաստելու համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությանը, ինչպես նաև աջակցելու հաստատություններում խնամք ստացող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի կատարման ենթակա գործողություններն են.

- Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում
- Առողջապահական, սոցիալական եւ կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների տրամադրում
- Վերականգնողական /թերապևտիկ( ֆիզիոթերապևտիկ) ծառայությունների տրամադրում
- Վարքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ
- Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթի տրամադրում
- Կրթական աջակցության տրամադրում երեխաներին և նրանց ծնողներին
- Ցերեկային խնամքի կենտրոնում և/կամ դրանից դուրս գտնվելու որոշակի ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող երեխային ըստ անհրաժեշտության ուղեկցողի ծառայություն:

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**1.1 Սոցիալական աջակցություն**. Սոցիալական աշխատողի կողմից, իրականացված կարիքի գնահատման հիման վրա որոշվել է շահառուին տրամադրվող ծառայությունների շրջանակը: Իրականացվել է 71 երեխայի և ընտանիքի կարիքների գնահատում ԱՀ ԲՀԿ սոցիալական աշխատողների և ՄԱԾՏԿ աշխատակիցների հետ համատեղ տնայցերի միջոցով, որից 6-ը Արցախից տեղահանված: Կարիքի գնահատման հիման վրա կազմվել

է 135 շահառուի անհատական սոցիալական ծրագիր, որից 18-ը Արցախից տեղահանված: Համալիր կարիքների հայտնաբերման դեպքում սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 2 ԿԴԻՀ երեխայի և նրանց ընտանիքների դեպքի վարում, որն իր մեջ ներառում է՝ սոցիալական դեպքի փաստաթղթավորված ամբողջական փաթեթ, միջամտության պլանի կազմում, սոցիալական խորհրդատվության, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, ուղղորդումների իրականացում, մշտադիտարկում և շարունակական վերահսկողություն: Սոցիալական աշխատողների կողմից պարբերաբար իրականացվել է 135 շահառու երեխայի, որից 18-ը Արցախից տեղահանված, կարիքների վերագնահատում և անհրաժեշտության դեպքում սոցիալական ծառայությունների տեսակների տրամադրման վերանայում՝ նեղ մասնագետների կողմից սահմանվելով նոր նպատակներ: 73 ԿԴԻՀ երեխայի գործ մուտքագրվել և 135 ԿԴԻՀ երեխայի գործ պարբերաբար խմբագրվել են Մանուկ տեղեկատվական համակարգում:

Կարևոր տեղ է հատկացվել նաև երեխայի շահից բխող պետական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցությանը:

Ծրագրի ընթացքում կիրառվել են դեպքի հետ սոցիալական աշխատանքի, ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի, համայնքային սոցիալական աշխատանքի մեթոդները: Կախված յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունից՝ որոշվել է տվյալ դեպքի հետ սոցիալական աշխատանքի մեթոդի ընտրությունը կամ մի քանի մեթոդների համադրությունը: Աշխատանքը իրականացվել է շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ ԿԴԻՀ երեխաների իրավունքների, այդ թվում ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով:

**1.2 Առողջապահական, սոցիալական եւ կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների տրամադրում**

Բազմամասնագիտական թիմը, գնահատված կարիքի հիման վրա, ԿԴԻՀ երեխաներին և նրանց ծնողներին տրամադրել է համապատասխան խորհրդատվություն, ովքեր սոցիալական, առողջապահական և/կամ կրթական ոլորտներում հանդիպել են խոչընդոտների: Յուրաքանչյուր դեպքին համապատասխան, սոցիալական աշխատողը կատարել է ուղղորդումներ, ինչպես օրինակ կրթական գործընթացում ընդգրկվելու, առողջապահական ծառայություններից անխափան օգտվելու նպատակով և այլն:

Իրականացվել է թվով 1 երեխայի դեղորայքի տրամադրման շարունակական վերահսկողություն:

Իրականացվել են համագործակցություններ աջակից կառույցների հետ, վերահսկողություն, տրամադրվել են խորհրդատվություններ թվով 2 երեխայի կրթությունից դուրս մնալը կանխելու ուղղությամբ:

Թվով 5 երեխա ուղղորդվել է ԱրԲեՍ ԲԿ՝ զարգացման մանկաբույժի գնահատում ստանալու նպատակով:

Թվով 5 երեխա ուղղորդվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ ԲԿ՝ հոգեբույժի գնահատում ստանալու նպատակով:

Թվով 3 երեխա ուղղորդվել է ՏՄԱԿ՝ ծառայություններից օգտվելու նպատակով:
Թվով 4 երեխա ուղղորդվել է ՄԳԳ՝ երեխայի փաստաթղթավորման նպատակով:
Թվով 2 երեխայի ծնող ուղղորդվել է մանկապարտեզ՝ ընդունման դիմում ներկայացնելու նպատակով:
Թվով 2 երեխա ուղղորդվել է ՔԿԱ բաժանմունք՝ բժշկական խորհրդատվություն ստանալու նպատակով:
Թվով 1 երեխայի ծնող ուղղարդվել է պոլիկլինիկա՝ երեխային հասանելիք դեղորայքը անվճար ստանալու նպատակով:
Արդյունքում ապահովվել է շահառուների՝ անխոչընդոտ կրթություն ստանալու, առողջապահական հաստատություններից օգտվելու իրավունքը: Երեխաները և նրանց ընտանիքի անդամներն ակտիվ ներգրավվել են որոշումների կայացման փուլում, ծառայությունները տրամադրվել են գնահատված անհատական կարիքի հիման վրա: Սոցիալական աշխատողի ուշադրության կիզակետում է եղել երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերի հայտնաբերումը, համապատասխան միջամտության իրականացումը և նրանց՝ կրթական համակարգում ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ բոլոր հնարավոր դեպքերում:
Տրամադրված խորհրդատվություններից ու ուղղորդումներից հետո սոցիալական աշխատողը պարբերաբար հետևել է ուղղորդման ընթացքին, համոզվելու համար, որ ուղղորդումը եղել է հասցեական, ծառայել է նպատակին, որի արդյունքում խնդիրը կարգավորվել է: Ուղղորդումների մշտադիտարկման համար կազմվել է ուղղորդման հետագծի ձևաթուղթ, որտեղ արտացոլվել են բոլոր կատարված ուղղորդումներն ու ստացված արդյունքները: Սոցիալական աշխատողի ուշադրության կիզակետում եղել են երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերի կանխումը և/կամ հայտնաբերումը և համապատասխան միջամտության իրականացումը:

**1.3 Հոգեբանական աջակցություն**. նախատեսվող ծառայության շրջանակում հոգեբանի կողմից տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն երեխային/անհրաժեշտության դեպքում նաև ծնողին/, իրականացվել են հոգեբանական անհատական և խմբային պարբերական հանդիպումներ՝ միտված շահառուների հոգեբանական վիճակի բարելավմանը, սթրեսակայունության ձևավորմանը և պահպանմանը: Հոգեբանական ծառայություն են ստացել վարքային խնդիրներ, ուշադրության պակաս հիպերակտիվության համախտանիշ, Դաունի համախտանիշ, Աուտիստիկ սպեկտորի խանգարում, վախեր, ներքին կոնֆլիկտներ, ագրեսիվ վարք, հոգեխոսքային զարգացման հապաղում, դևիանտ վարք, գլոբալ զարգացման խանգարում, հուզական լարվածություն, հաղորդակցման հմտությունների դժվարություններ, ծնող-երեխա փոխհարաբերություններում խնդիրներ, իմացական ոլորտի անհամապատասխանություն ունեցող երեխաներ:
Հոգեբանական ծառայություն ստացել են թվով 51 երեխա, որից 3-ը Արցախից տեղահանված: Երեխաների հետ աշխատանքները եղել են խմբային և անհատական:

Խմբային աշխատանքներն ուղղված են եղել համբերատարության ձևավորմանը, սպասելու կարողությանը, ուշադրության կենտրոնացման զարգացմանը, հուզական լարվածության նվազմանը:

Անհատական խորհրդատվություններն ուղղված են եղել վախերի հաղթահարմանը, հույզերի և վարքի կառավարմանը, տարիքին համապատասխան խաղի կառուցման, ինքնամփոփության նվազեցմանն ու ինքնագնահատականի բարձրացմանը, ագրեսիվ վարքի նվազեցմանը, ինքնաճանաչմանը, ընդօրինակմանը:

Անհատական աշխատանքի արդյունքում երեխանները կարողանում են խոսքայնացնել սեփական վախերը, կառավարել սեփական վարքը որոշակի ժամանակահատվածով: Ագրեսիվ վարքի դրսևորումները նվազել են: Կարողանում են կատարել պարզ հրահանգներ, կառուցել տարիքին համապատասխան խաղ:

Խմբային աշխատանքի արդյունքում երեխաները ձեռք են բերել թիմում համագործակցելու հմտություններ, զարգացել են շփման և հաղորդակցման պարզ հմտությունները: Կարողանում են ընդօրինակել, նմանակել: Զարգացել է հիշողությունը, մտածողությունը, ուշադրության կենտրոնացումը, իրենց հերթին սպասելու կարողությունը:





Կենտրոնում երեխաները ստացել են ոչ ֆորմալ կրթություն և հաճախել են ժամանցային խմբակների՝ հիմնվելով «HEART-Ապաքինում կրթության և արվեստի միջոցով» ձևաչափի վրա: Կենտրոնի խմբավարները օգտագործելով արտ-թերապևտիկ մեթոդները, (նկարչաթերապիա, կավագործություն, երաժշտաթերապիա, ձեռագործ աշխատանքներ և այլն) օգնել են երեխաներին գիտակցել և արտահայտել իրենց զգացմունքները՝ կապված իրենց փորձառությունների հետ: Ծառայությունը նպաստել է երեխայի

հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, ուժեղ և թույլ կողմերի վեր հանմանը և այլն: Ծրագրի շահառուները օգտվել են կենտրոնում գործող տարբեր խմբակներից, ինչպես մասնագիտական կողմնորոշումը հեշտացնելու, արտթերապևտիկ ծառայություններ ստանալու, այնպես էլ ժամանցային և մշակութային միջոցառումների միջոցով համայնքային կյանքին ակտիվ ներգրավվածությունն ապահովելու նպատակով: Բոլոր խմբակները ունեն թերապևտիկ բնույթ, իսկ երեխաները խմբակներում ներգրավվել են կենտրոնի մասնագետների ուղղորդումների հիման վրա:

**«Կյանքի հիմնարար հմտություններ»** խմբակում ծառայություն են ստացել կենտրոն հաճախող թվով 52 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխա, որից 10-ը Արցախից տեղահանված:

Խմբակում իրականացվել են տարաբնույթ աշխատանքներ՝ ուղղված երեխաների սոցիալականացմանը, խմբում ինտեգրմանը, խմբի անդամների հետ համագործակցությանը, հույզերի կառավարմանը, կոնֆլիկտայնության մակարդակի նվազեցմանը, վարքային ճիշտ դրսևորումների ձևավորմանը, հիգիենայի պահպանմանը, վարվեցողության կանոնների տիրապետմանը, անվտանգության ապահովմանը, լավը տեսնելու կարողության ձևավորմանը, ինքնաներկայացմանը, սպասելու կարողության ձևավորմանը, ճանաչողականության, խոսքի զարգացմանը, քննադատական և վերլուծական մտածողության ձևավորմանը:

Իրականացվել են թեմատիկ խմբային աշխատանքներ՝ «Ութ գույն ունեցող ծաղիկը», «Իմ օրը», «Էթիկա և վարվեցողություն», «Անավարտ պատմություններ», «Ես ուրիշի աչքերով», « Իմ պարտականությունները և իրավունքները», «Կյանքի ծառ», «Իմ բարի քայլերը»:

Կիրառվել են *խաղաթերապիայի* բազմաթիվ մեթոդներ՝ գրաֆիկական թելադրություններ, խաղեր ավազով և ջրով, որոնք ուղղված են երեխաների ադապտացիային, խմբում ինտեգրմանը, հիպերակտիվության հաղթահարմանը, ագրեսիվ վարքի շտկմանը: Խաղաթերապիա՝ ուղղված մանր մոտորիկայի, հիշողության, մտածողության, ճանաչողականության, խոսքի զարգացմանը:

 

Իրականացվել են *հեքիաթաթերապիաներ*՝ թերապևտիկ հեքիաթների, առակների ընթերցում-դիտում, դերային խաղ՝ ուղղված սոցիալ-հուզական վարքի շտկմանը, վախերի, անհանգստությունների բացահայտմանը և հաղթահարմանը, ընկերասիրության և փոխօգնության գաղածարի ձևավորմանը, լսելու և սպասելու, ընկալման կարողությունների ձևավորմանը:

 

Իրականացվել է ավազաթերապիա՝ տեխնիկաների կիրառմամբ՝ ուղղված սոցիալ-հուզական, ագրեսիվ վարքի շտկմանը, երևակայության և մանր մոտորիկայի զարգացմանը:
Կիրառվել են *երաժշտաթերապիա*՝ *երաժշտագրամմաներ, նեյրոգիմնաստիկա*՝ *նեյրովարժություններ*, որոնք ուղղված են երաժշտության միջոցով հույզերի, ապրումների արտահայտմանը, ռիթմ-տեմպ զգացողության զարգացմանը, ռելաքս վիճակի ապահովմանը:

 

Կիրառվել են *արտթերապիայի* բազմաթիվ մեթոդներ՝ *արտ-վարժություններ, մոնոտոպիաներ, պիկտոգրամմաներ*՝ ուղղված ինքնավերլուծությանը, ուժեղ կողմերի և հնարավորությունների վերհանմանը:



«Կյանքի հիմնարար հմտություններ» խմբակում կատարված աշխատանքների արդյունքում, երեխաները կարողանում են անկաշկանդ ներգրավվել խմբային աշխատանքներին, լսել և սպասել, կենտրոնացնել ուշադրությունը, արտահայտել կարծիք, առաջ քաշել գաղափարներ, արտահայտել սեփական պահանջները, իրենց զգալ խմբի լիիրավ, սիրված անդամ, կիրառել վարվեցողության կանոնները,

տիրապետել անվտանգության կանոններին, վերահսկելի դարձնել սեփական հույզերը, վարքը:

**«Ձեռագործ աշխատանքներ» խմբակում** ծառայություն են ստացել կենտրոն հաճախող թվով 62 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխա, որից 5-ը Արցախից տեղահանված: Խմբակում իրականացվել են ասեղնագործություն, մակրամե, նկարչություն կտավների վրա, թեմատիկ նկարների ստեղծագործում, բացիկների պատրաստում, մատնանկարչություն, փուլային նկարչություն, ծեփամածիկով և գունավոր թղթերով աշխատանք:

Իրականացվել է թեմատիկ խմբային աշխատանք՝ գունավոր թղթերով, խաղ-վարժանքներ՝ ուղղված խմբում համագործակցությանը, երևակայության, ստեղծագործական մտածողության ձևավորմանը, արագ կողմնորոշմանը, ինքնարտահայտմանը:



Կատարվել է արտթերապևտիկ տեխնիկաներ՝ «Օրիգամի», մոնոտոպիա, ապլիկացիա՝ ուղղված ուշադրության կենտրոնացմանը, նյութի ընկալմանը, լարվածության նվազեցմանը, բացասական հույզերից ազատմանը, ագրեսիվ, կոնֆլիկտային վարքի շտկմանը:




Իրականացվել է այլընտրանքային նկարչություն՝ ուղղված ընդհանուր լարվածության թուլացմանը, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Կազմակերպված աշխատանքների արդյունքում երեխաները սովորել են ասեղնագործել, մակրամեով հյուսել թևնոցներ, պատրաստել թղթե իրեր: « Ձեռագործ աշխատանքներ» խմբակը նպաստել է երեխաների հույզերի արտահայտմանը, ինքնաճանաչողությանը, երևակայության, մանր մոտորիկայի զարգացմանը, գույների համադրմանը և նոր գաղափարներ առաջ քաշելուն:




Երեխաների հետ աշխատանքում կարևոր տեղ է հատկացվել նաև հավասարը հավասարի սկզբունքով հասակակիցների հետ շփումը՝ բացառելով ցանկացած տեսակի խտրականության կիրառումը՝ ըստ ընտանեկան կարգավիճակի, հաշմանդամության՝

կիրառելով դերային խաղերի, ֆիլմերի դիտման մեթոդը:

**2. Վերականգնողական /թերապևտիկ ծառայությունների տրամադրում**.

ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաները՝ գնահատված կարիքի հիման վրա, օգտվում են վերականգնողական ծառայություններից, որոնք ուղղված են զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների վիճակի բարելավմանը կամ ամբողջական վերականգնմանը: Ծրագրի շրջանակում, ըստ կարիքի, շահառուներին տրամադրվում են վերականգնողական ծառայությունների հետևյալ տեսակները՝

**Հենաշարժողական խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ**
Հենաշարժողական խնդիրների հաղթահարման նպատակով երեխաների հետ իրականացվել է ֆիզիկական թերապիա: Ֆիզիկական թերապևտը աշխատել է հատուկ կարիքներով երեխաների, ֆիզիկական զարգացման հապաղում ունեցող, օրգանիզմի ընդհանուր ախտահարմամբ, հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների հետ, իսկ որոշ դեպքերում ծառայություն են ստացել նաև ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության բարելավման կարիք ունեցող երեխաները՝ պոտենցյալ բարդությունները կանխարգելելու նպատակով: Հենաշարժողական խնդիրների հաղթահարման նպատակով աջակցություն են ստացել կենտրոն հաճախող թվով 23 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխա, որից 1-ը Արացախից տեղահանված:

**Վարքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ:** Հատուկ ուշադրության կիզակետում են գտնվել և համապատասխան ծառայություններ ստացել թվով 12 ԿԴԻՀ երեխա, որից 1-ը Արցախից տեղահանված, ովքեր ունեցել են վարքային խնդիրներ: Սուր սթրեսային վիճակում գտնվող շահառու երեխաներին, ինչպես նաև աջակցություն ստանալու պահին հուզական և վարքային խնդիրներ ունեցող անձանց մասնագիտական աջակցություն է տրամադրվել վարքային ուղղվածություն ունեցող հոգեբանի կողմից՝ հատուկ ընտրած մեթոդաբանությամբ և միջամտությամբ: Վերականգնողական ծառայությունները կենտրոնում կազմակերպվել են թիմային մոտեցմամբ և մասնակցային սկզբունքով: Թիմում ընդգրկվել են շահառուն և նրա ծնողը, լոգոպեդը, ֆիզիոթերապևտը, հոգեբանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ մասնագետներ: Բազմամասնագիտական թիմն իր աշխատանքները կառուցել է՝ հիմնվելով բժշկական ցուցումների և միջամտության պլանի վրա՝ սահմանելով յուրաքանչյուր երեխայի համար իրատեսական, հասանելի նպատակ: Աշխատանքներն ուղղվել են երեխաների ինքնասպասարկման հմտությունների զարգացմանը, ֆիզիկական վիճակի բարելավմանը, որոնք իրենց հերթին նպաստել են նրանց կյանքի որակի բարձրացմանը՝ դարձնելով նրանց հասարակության լիիրավ անդամ և ներգրավվելով տարբեր հասարակական գործունեություններում:

**3.Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթի տրամադրում**
Կենտրոնում գտնվելու ընթացքում յուրաքանչյուր ծառայություն ստացող երեխա

հնարավորություն ունի սնունդ ստանալու՝ նախօրոք կազմված և հաստատված ճաշացանկի հիման վրա: Ճաշացանկը կազմվում է սննդի ծառայության կազմակերպչի կողմից, իսկ սնունդը տրամադրվում է կենտրոնի խոհանոցային սենյակում:

**4. Կրթական աջակցության տրամադրում երեխաներին և նրանց ծնողներին**

**4.1 Դասընթացների կազմակերպում**

ԿԴԻՀ երեխաների համար, ըստ կարիքի, իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմայով՝

- «Շփման և հաղորդակցման հմտությունների զարգացում»

Դասընթացն իրականացվել է 2 հանդիպմամբ, պլանավորվում է ևս 4 հանդիպում:
Դասընթացի նպատակն է խմբային աշխատանքների միջոցով խթանել 6-10 տարեկան երեխաների փոխհամագործակցությանը և փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը և հաստատմանը, խմբային գիտակցության զարգացմանը, հոգեհուզական լարվածության թուլացմանը, էմպաթիայի զարգացմանը, ինքնարտահայտմանը, շփման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը, բարենպաստ մթնոլորտի հաստատմանը:
Դասընթացին մասնակցել է թվով 8 երեխա:





**4.2 Միջոցառումների կազմակերպում** Երեխաները ընդգրկվել են նաև ազատ ժամանցի և մշակութային միջոցառումներում /ծննդյան տոների նշում և այլն/՝ նպաստելու համար

համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությանը: Ժամանցային և մշակութային միջոցառումներին իրենց մասնակցությունն են ունեցել նաև շահառուների ծնողները՝ համայնքային կյանքին ակտիվ ներգրավվածությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև դրանք ուղղված են շահառուների մոտ կյանքի դժվարին իրավիճակի հաղթահարման ընթացքի լարվածության թուլացմանը: Նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ ժամանցային միջոցառումները նպաստում են սեփական խնդիրներից միաժամանակ կտրվելուն և հետագայում խնդիրներին այլ տեսանկյունից նայելուն, դրանց լուծման համար առավել արդյունավետ ուղիներ գտնելուն:
Կազմակերպվել են թեմատիկ միջոցառումներ՝

- Հայոց բանակի օր (31.01.2025թ):

Միջոցառման ընթացքում երեխաները մասնակցել են կազմակերպված սպորտային մրցույթներին, խոսվել է օրվա կարևորության մասին: Միջոցառմանը մասնակցել է թվով 30 երեխա, որից 9-ը Արցախից տեղահանված:



- Տյառնընդառաջ (14.02.2025թ)։

Երեխաները ծանոթացել են տոնի նշանակությանը, խորհրդին։ Տյառնընդառաջի խորհրդանիշ հանդիսացող կրակը պատրաստվել է ցերեկային կենտրոնի երեխաների ձեռքով։ Միջոցառմանը մասնակցել է թվով 38 երեխա, որից 7-ը Արցախից տեղահանված։



- Մարտի 8 (10.03.2025)

Միջոցառման իրականացման համար երեխաների հետ պատրաստվել են բացիկներ, ծաղիկներ՝ մայրիկներին նվիրելու համար: Միջոցառման ընթացքում երեխաները երգել, ասմունքել և պարել են: Միջոցառմանը մասնակցել է թվով 42 երեխա, որից 8-ը Արցախից տեղահանված:



- Գիրք նվիրելու օր (19.02.2025)

Իրականացվել է հեքիաթի ընթերցում, ֆիլմի դիտում, որը նպաստել է երեխաների իրազեկվածությանը գրողի գործունեության և հայ գրականության մեջ ունեցած դերի մասին: Մասնակցել են թվով 31 երեխա, որից 5-ը Արցախից տեղահանված:





**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| • Ճամբարակի հարակից գյուղերում ապրող շահառու երեխաները ունեն փոխադրամիջոցի, ժամանակի դժվարություններ՝ կենտրոն հաճախելու առումով:<br>• Կենտրոնում մեծ թիվ են կազմում զարգացման բարդ խանգարումներ ունեցող երեխաները, որոնց հետ աշխատելու համար ավելի շատ մասնագիտական ներուժ է պահանջվում: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվող գործողություններն են.

- Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում
- Առողջապահական, սոցիալական եւ կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների

| |
|---|
| տրամադրում<br>• Վերականգնողական /թերապևտիկ(լոգոպեդական, ֆիզիոթերապևտիկ) ծառայությունների տրամադրում<br>• Վարքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ<br>• Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթի տրամադրում<br>• Կրթական աջակցության տրամադրում երեխաներին և նրանց ծնողներին<br>• Ցերեկային խնամքի կենտրոնում և/կամ դրանից դուրս գտնվելու որոշակի ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող երեխային ըստ անհրաժեշտության ուղեկցողի ծառայություն: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| Ամբողջ թիմի համար իրականացվել է դասընթաց (21.03.2025թ.) «Կազմակերպության էթիկան նորմեր և վարքականոններ, անվտագության ապահովման քաղաքականություն և ազդարարման ընթացակարգ» թեմայով: |